

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

..... N ..... Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ անտառային հողերից գյուղատնտեսական հողատեսքերի վարձավճարների նվազագույն (մեկնարկային) չափը հավասարեցվում է համապատասխան հողագնահատման շրջանում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի (հողի գնահատման խմբերի) համար Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի N 237 որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված N3 հավելվածով սահմանված չափերին և դրանց տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված նորմերի կիրառմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐՎՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ**

N	Մարզերի անվանումը	Մեկ հեկտարի վարձակալության տարեկան վարձավճարի նվազագույն չափը						
		Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) մեկ հեկտարի կադաստրային միջին արժեքը (դրամ)	Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) մեկ հեկտարի կադաստրային միջին արժեքի նկատմամբ կիրառվող գործակիցն ըստ անտառօգտագործման տեսակների և մեկ հեկտարի նվազագույն վարձավճարը մեկ տարվա համար					
			մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում	կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման նպատակներով անտառօգտագործում		գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում		
				գործակից	վարձավճար, դրամ	գործակից	վարձավճար, դրամ	գործակից
1	ք. Երևան 4-րդ գոտի	3460000	1,0	3460000	0,6	2076000	0,2	692000
	5-րդ գոտի	1384000	1,0	1384000	0,6	830400	0,3	415200
2	Լոռի	134500	3,1	416950	1,7	228650	0,3	40350
3	Տավուշ	141250	3,1	437875	1,5	211875	0,3	42375
4	Սյունիք	97500	4,1	399750	2,1	204750	0,3	29250
5	Կոտայք	95625	10,4	994500	5,2	497250	0,8	76500
6	Շիրակ	102500	1,4	143500	0,7	71750	0,2	20500
7	Վայոց ձոր	65000	7,0	455000	4,0	260000	0,5	32500
8	Գեղարքունիք	130000	1,4	182000	0,8	104000	0,3	39000
9	Արագածոտն	91670	1,6	146672	0,8	73336	0,4	36668

Հանրապետական նշանակության մայրուղիների, պատմամշակութային հուշարձանների և ռելիեֆային գոտիների տարածքներում մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործումն մեկ հեկտարի վարձակալության տարեկան վարձավճարի նվազագույն չափը հաշվարկվում է նշված գործակիցների կրկնապատիկի չափով:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 50-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 54-րդ կետի պահանջներով: Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափի սահմանումը անհրաժեշտ է, քանի որ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի համաձայն պետական սեփականություն համարվող անտառները կարող են տրամադրվել վարձակալության:

Ելնելով այն հանգամանքից, որ դեռևս չի կատարվել պետական սեփականություն համարվող անտառների կադաստրային գնահատում, հետևաբար անտառների վարձավճարի նվազագույն չափը հաշվարկվել է գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) մեկ հեկտարի կադաստրային միջին արժեքի և վերջին տարիներին անտառօգտագործման ոլորտում ձևավորված շուկայական գների հիման վրա:

Արարատի և Արմավիրի մարզերը ընդգրկված չեն, քանի որ Արարատի մարզի պետական անտառներն ունեն պետական արգելոցի կարգավիճակ, իսկ Արմավիրի մարզում պետական անտառներ չկան:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## Ցանկ

«Պետական սեփականություն համարվող անտառների վարձավճարի նվազագույն չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման ժամանակ օգտագործված իրավական ակտերի

1. ՀՀ հողային օրենսգիրքը,

2. ՀՀ անտառային օրենսգիրքը,

3. ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի տվյալները հաստատելու մասին» N 237 որոշումը,

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններից դուրս (մարզերի համար) գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված հողերի և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) կադաստրային գնահատման կարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշումը,

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N1746-Ն որոշումը,

6. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Գյուղատնտեսական և բնակավայրերի նշանակության հողերի կադաստրային գուտ եկամտի ու կադաստրային արժեքների (գների) 2005 թվականի չափերը սահմանելու մասին» N 879-Ն որոշումը,